ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.05.2025

Սիրելի՛ հայրենակիցներ
Շնորհավորում եմ Մայիսի 1-ի՝ Աշխատանքի օրվա կապակցությամբ:

Այս տոնի հիմքում հարգանքն է աշխատող մարդու նկատմամբ և պատեհ առիթ է, որ անկեղծ շնորհակալություն հայտնենք բոլոր նրանց, ովքեր բարեխղճորեն և բարձր մասնագիտական մակարդակով աշխատում են մեր մարզի բարօրության համար՝ տարբեր ոլորտներում:

Անկախ աշխատանքի բնագավառից, բոլորիդ մասնագիտական նվիրումի, հաջողությունների և նվաճումների միջոցով է կառուցվում մեր հայրենիքը, զարգանում նրա տնտեսական, մշակութային, անվտանգային, գիտական ներուժը:

Շատ կարևոր է պահպանել բազմաթիվ սերունդների կողմից ձևավորված բարի ավանդույթները և մեր հաջորդ սերունդների մեջ սերմանել ամեն աշխատանքի հանդեպ հարգանքը, պարտականության և պատասխանատվության զգացումը, քանզի մեր պետության ներկան և ապագան կախված է յուրաքանչյուր աշխատող մարդուց:

Թո՛ղ բոլորիս աշխատանքային նվաճումները դառնան կարևոր ներդրում մեր մարզի, երկրի զարգացման գործում, և մաղթում եմ, որ այս տոնը դրական տրամադրություն հաղորդի ձեզ մասնագիտական պարտականություններում:

Խաղաղ ու ստեղծարար միջավայր, նորանոր հաջողություններ բոլորիդ՝ ձեր աշխատանքում և բոլոր բարի գործերում: